Հայոց անեղծ մնալ։ Մուֆթի, Քաղաքապետն և Դպրապետ դատարանի, 'ի ձեռն որոյ գրեալ են Հէօճմէթքն, ընթերցցին զգրեանս և մանրամասն քննութեամբ որոշեալ մաքրեսցեն շինութիւնք տեղւոյն այնորիկ։

Մուֆթի Էֆէնտի. Երկոքին հրովարտակքն պարունակեն զխնդիր շինութեան, պատարագելոյ եւ զկանթեղս կախելոյ. վերջինն 'ի հաստատութիւն առաջնոյն է տարբեր թուականաւ և արձանագրութիւնն ջնջեալ. և 'ի մասին շինութեան չունի զօրութիւն. այլ բարւոք թուի որոշել, թէ ո՞յք համաձայն հրովարտակին են, եւ ո՞յք հրամանաւ Դատաւորին. հրովարտակք հրամայեն 'ի վերայ նախկին դրից, ո՞ր տեղիքն 'ի վերայ նախնի հիման՝ և ո՞ր տեղիքն արտաքոյ նորին են. որովհետեւ բողոքողք Ցոյնք են, նոցա պարտ է որոշել եւ պատմել. եթէ Հայք հաստատեսցեն զնոսին, բարի, իսկ եթէ հակառակեսցին, ըստ մտաց հրովարտակաց վարիմք և համոզեմք զերկոսին կողմն։ Դպրապետ դատարանի ասէ՝ երկոքին հրովարտակքն Հայոց զխնդիր նորոգութեան պարունակեն, որպէս ասաց Մուֆթին, և գործ շինութեան յանձնեալ է Ցունաց, արգելեալ զՀայս, ուստի հարկ է ջնջեալ համարիլ զառաջին հրովարտակն Հայոց, և եթէ չլինի եւս, չունի զօրութիւն վասն շինութեան։ Սակայն նախ պատմեսցեն Ցոյնք զգործ շինութեան, և յետ այնորիկ խօսեսցուք։

Փոխանորդն Ցունաց. Աւելորդ և արտաքոյ Հէօճմէթից շինուածքն են այսոքիկ. երես արտաքին դրան երկաթապատ լինիլն, և 'ի վերայ դրան այնորիկ 'ի ներքին կողմն Հայկական արձանագրութիւնն. կանթեղք կախեալ 'ի տախտակամածէ, պատկերն 'ի վերայ դրան գմբեթին, երկաթի ծորակաւ փոքր լուսարարանն 'ի գաւթին. վերին յարկն 'ի վերայ սենեկի լուսարարին եւ գուռն նորին, քարեայ սանդուխն երկաթի յենարանաւ. մի փոքր սրճարան կից սենեկաց 'ի վերայ ճիթահանին, եւ ներքին մեծ սենեկի արտաքին գուռն երկաթապատ. այսոքիկ շինուածովք ձեւացեալ է մի փոքր վանք. Տեսուչն եւ սպասաւորքն յայտ առնեն զմշտնջենաւորութիւն նորին. և եթէ քննեսցին, դիւրաւ յայտնի ճշմարտութիւնն, և ոչ է պարտ մեզ քննել և որոշել զամենայնն մի ըստ միոջէ, այլ պաշ-